



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՒՂԱՓԱՌ ՀԱՅ, ՂԵՊՏԻ ԵՒ ԱՍՈՐԻ
 ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ
 ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱՔ**

Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու խորհուրդը, յանձնախումբը Հայ Առաքելական Եկեղեցւոյ զոյգ առաջնորդներուն՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտրեանի, Ղրպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդ Գերշ. Տ. Սերաբիոն Արքեպիսկոպոսի, եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդ Գերշ. Տ. Եուճին Քափլան Արքեպիսկոպոսի, տարուան ընթացքին միատեղ պատարագ, եկեղեցական արարողութիւններ, եկեղեցականաց հաւաքներ, երիտասարդաց թէ աշակերտական աշխատանքային հանդիպումներ կը կազմակերպէ:

Միջ-թեմական կիրակնօրեայ վարժարաններու կազմակերպիչ յանձնախումբը ծրագրուած յայտագրով Շաբաթ, 8 Դեկտեմբեր 2007ին, հովանաւորութեամբ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդ Սրբազան Հայրերուն, Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Էջմիածնական Թեմի Առաջնորդարանէն ներս, Պըրպէնք, առաւօտեան ժամը 9:30-էն յետմիջօրէ ժամը 2:00 տեղի ունեցաւ միջ-կիրակնօրեայ վարժարաններու աշակերտական միօրեայ դաստիարակչական ծրագրով հաւաք:

Աշակերտներու արձանագրութեան յաջորդող առաւօտեան ժամերգութեան, քոյր եկեղեցիներու հոգեւորականներ եւ աշակերտներ իրենց մայրենի լեզուներով մասնակցեցան եկեղեցական արարողութեան: Աշակերտական հաւաքին այս տարուան նշանաբանը Քրիստոսաւանդ Աւետարանի այն պատուիրանն էր, ուր կ'ըսուէր. «Միրեցէ՛ք իրար, ինչպէս ես ձեզ սիրեցի՝ ուրք ալ իրար սիրեցէք» (Յով. 13:34):

Առաջնորդ Հայրեր աշակերտութեան, ուսուցչական կազմերուն բարի գալստեան եւ քաջալերական խօսքեր արտասանեցին, շեշտելով նախաինսամ Աստուծոյ մարդոց ու աշխարհի նկատմամբ տածած հայրական, հոգատար սերը մանաւանդ, որ Քրիստոսի մարդեղութեամբ՝ Աստուծոյ փրկագործութեան խորհուրդը վախճանական նպատակին հասաւ: Քրիստոսով, աստուածային զոհաբերուող սերը՝ դէպի Աստուած ու մեր նմանին հանդէպ նոր իմաստ եւ արտայայտութիւն գտաւ: Աստուածային այդ սերը կը պարտաւորեցնէ մեզ ապրելու, գործելու եւ առաջնորդուելու Քրիստոսի օրինակով: Ապա Առաջնորդ Սրբազան Հայրերը, աշակերտութեան կոչ ուղղելով, հրաւիրեցին բոլորը իրենց սրտերուն մէջ ընդունելու եւ բնակեցնելու Քրիստոսի սերը ու Անոր սիրով եւ ներկայութեամբ առաջնորդուելու:

Հիւրընկալ Յովնան Արք. Տերտերեան, հաւաքին մասնակցող Գերշ. Տ. Սերաբիոն Արքեպիսկոպոսի, եւ Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի սրբանկարներ նուիրեց: Իսկ Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Տ. Եուճին Բափլան Արքեպիսկոպոսը -որ անհանգստութեան պատճառաւ հաւաքէն կը բացակայէր- փոխարինող եկեղեցականին յանձնուեցաւ յիշատակի սրբանկարը: Իսկ միջ-կիրակնօրեայ վարժարաններու կազմակերպիչ յանձնախումբի անունով հայկական խաչքար նուիրուեցաւ յանձնախումբի վարիչ Տիկ. Փաթրիսիա Ալաֆի:

Հաւաքական խմբանկարէ ետք, շուրջ երկու հարիւր հաշուող աշակերտներ, տարիքի համաձայն բաժնուեցան խումբերու եւ վարիչ-ուսուցիչներու առաջնորդութեամբ ունեցան աշխատանքային դաստիարակչական դասաապահ: Ըսան խումբերու բաժնուած աշակերտներ մտերմացան աստուածաշնչական եւ աւետարանական դէպքերու, դէմքերու եւ հերոսներու (Մովսէս Մարգարէի, Աբրահամի, Սամսոնի, Եղիա եւ Դանիէլ մարգարէներուն, Յովհաննէս Աւետարանիչի, Զրիստոսի կատարած հրաշքներէն՝ Հինգ հազարի կերակրուիլը, Ծովուն վրայէն քալելը, Յիսուսի Համբարձման եւ Հոգեգալուստի դէպքերուն, Պօղոս Առաքեալի), ինչպէս նաեւ ծանօթացան Ուղղափառ եկեղեցիներու հիմնադիրներուն, ազգային սուրբերու եւ աստուածաբան եկեղեցական տիտաններու (Ս. Կիրեղ Աղեքսանդրացի, Ս. Ներսէս հայրապետ, Աստիոցի Ս. Իգնատիոս հայրապետի), միաժամանակ իրազեկ եղան Նիկիական Ուղղափառ Հաւատամքի (325) գումարման դրոյապատճառներուն եւ անոնց տուն տուող պատմական ու դաւանաբանական այժմեական արժէքին:

Դասարանային աշխատանքներու աւարտին իւրաքանչիւր խումբ սերտուած նիւթերու եւ աստուածաշնչական պատումներու ամփոփ ներկայացումը գծանկարներով եւ պատկերուած ցուցատախտակներու վրայ ամփոփ ներկայացուց:

Միջ-կիրակնօրեայ վարժարաններու միօրեայ դաստիարակչական հաւաքը հաւաքական ճաշով եւ հիւրընկալ Առաջնորդարանի կողմէ ուսուցչական կազմերուն եւ աշակերտութեան տրամադրուած յիշատակի նուերներով իր աւարտին հասաւ:

Աշակերտներ, դաստիարակ ուսուցիչ-ուսուցչուհիներ, քրիստոնէական հաւատքի եւ հաւաքական կեանքի օրինակելի մթնոլորտի մէջ փոխադարձ փորձառութիւններով հարստացած՝ գոհունակ սրտով վերադարձան իրենց շրջանները:

Ս.Ծ.Վ.Ա.

ORIENTAL ORTHODOX SUNDAY SCHOOL STUDENTS PARTICIPATE IN A SPIRITUAL GATHERING

On Saturday, December 8, a spiritual gathering for Sunday School students of Orthodox Churches took place at the Diocesan headquarters in Burbank, under the auspices of the Council of Oriental Orthodox Bishops H.E.

Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.G. Bishop Serapion of the Coptic Orthodox Church, and H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan of the Syriac Orthodox Church. The gathering was organized by the Oriental Orthodox Sunday School Committee.

After registration, the students participated in Morning Prayer services in their respective languages. The theme of the gathering was “love one another; as I have loved you, that you also love one another” (John 13:34).

In their address to the students and teachers, the Prelates all stressed God’s love towards mankind, especially His sacrificial love which He demonstrated to the world through Christ. They concluded by reminding the students to accept Christ into their hearts and to live their lives guided by His example.

The Prelates were then presented with saints’ pictures by Archbishop Derderian. On behalf of the Sunday School Committee, an Armenian cross-stone was presented to director Mrs. Patricia Allaf.

The students, totaling near two hundred, then divided into groups of ten to participate in workshops where they learned about events and figures from the Bible. Each group was later invited to present the information they were taught. The spiritual gathering concluded with lunch and the presentation of mementos to the teachers and students by the host Diocese.